ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 24-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի ԹԻՎ 17-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2026 թվականի մարտի 14-ի թիվ 21-Լ հրամանը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 17-Լ հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) դադարեցնել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության հրշեջ-փրկարարական պատրաստության բաժնի պահեստապետ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.7-Կ-204)» հավելվածի գործողությունը.

2) դադարեցնել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի կրտսեր հրահանգիչ-պահեստապետ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.7-Կ-32)» հավելվածի գործողությունը.

3) «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչություն» պաշտոնների անձնագրերում կատարել լրացումներ՝ համաձայն հավելվածների.

2. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

25.03.2026թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ